# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1373

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՎԱՐԴ ՍԵՅՐԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նվարդ Սեյրանի Ավետիսյանի 16.06.2026 թվականի թիվ 02/9068 դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08062026-06-0051 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 8/1 հասցեում գտնվող Նվարդ Սեյրանի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 8/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 1986.89քմ մակերեսով (2008 թվականին ինքնակամ կառուցված 53.20քմ մակերեսով հասարակական սպասարկամ օբյեկտը, 60.62քմ մակերեսով ծածկարանը, 4.12քմ մակերեսով հարթակը և 1975 թվականին ինքնակամ կառուցված 813.80քմ հասարակական սպասարկման օբյեկտը, 22.04քմ, 12.02քմ, 12.02քմ և 21.76քմ մակերեսով աստիճանները թողնել ինքնակամ) շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վ. Համբարձումյան փողոց, 8/1 սպասարկման օբյեկտ:

բ. 61.83քմ մակերեսով (1975 թվականին ինքնակամ կառուցված 487.93քմ մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը և 2008 թվականին ինքնակամ կառուցված 30.48քմ մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը և 12.67քմ մակերեսով ծածկարանը թողնել ինքնակամ) շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վ. Համբարձումյան փողոց, 8/2 սպասարկման օբյեկտ:

3. 0.30320հա մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի  N 1374

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 5/1-1 ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 5/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԱՎԻԹ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Մարտինի Մարտիրոսյանի 14.07.2026 թվականի թիվ 02/10598 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17052021-06-0022 և 26092019-06-0050 վկայականները, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 5/1-1 և Տիգրան Մեծի պողոտա 5/1 հասցեներում գտնվող Դավիթ Մարտինի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02365հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող 63.98քմ մակերեսով շինությունները համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17052021-06-0022 և 26092019-06-0050 վկայականների:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տիգրան Մեծի պողոտա, 5/1 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1375

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 67 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդուարդ Վրույրի Պապինյանի 14.07.2026 թվականի թիվ 02/10599 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2228975 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Կնունյանց փողոց թիվ 67 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Բ. Կնունյանց փողոց, 67/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1376

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ: 06-033-0062-0004) ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զոյա Հրանտի Ավագյանի 16.07.2026 թվականի թիվ 02/10833 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 708624 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, գյուղ Դարպասում (կադաստրային ծածկագիր: 06-033-0062-0004) գտնվող տնամերձին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս, 6-րդ փողոց, 9-րդ նրբանցք, 6 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1377

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 9-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Սարիբեկի Հարությունյանի 14.07.2026 թվականի թիվ 02/10675 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19022019-06-0017 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Նալբանդյան փողոց 2-րդ նրբանցք 9-1 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մ. Նալբանդյան փողոց, 2-րդ նրբանցք, 28/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1378

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 8/3, Գ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 8/4 ԵՎ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 8/37-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՌ ԱՐԹՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոռ Արթուրի Սարգսյանի 16.07.2026 թվականի թիվ 02/10805 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10072026-06-0045, 15072026-06-0085 և 14112023-06-0021 վկայականները, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Գ. նարեկացու փողոց 8/3, Գ. Նարեկացու փողոց 8/4 և Նարեկացու փողոց 8/37-1 հասցեներում գտնվող Գոռ Արթուրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00871հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող 98.44քմ մակերեսով շինությունները համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10072026-06-0045, 15072026-06-0085 և 14112023-06-0021 վկայականների:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 8/3 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1379

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3/1, Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3/2 ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՓԻՆԵ ՁԻՎԱՆԻ ՋԱՎԱԽՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արփինե Ձիվանի Ջավախյանի 15.07.2026 թվականի թիվ 02/10769 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13102022-06-0025, 23112021-06-0043 և 17062026-06-0075 վկայականները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Հ. Թումամյան փողոց 3/1, Հ. Թումանյան փողոց 3/2 և Հ. Թումանյան փողոց 3/3 հասցեներում գտնվող Արփինե Ձիվանի Ջավախյանին սեփականության իրավունքով պատկանող 0.010797հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող 153.24քմ մակերեսով շինությունները համաձայն՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Հ. Թումանյան փողոց, 3/1 գրասենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N1380

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 7/39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վագիֆ Գարեգինի Գալոյանի 14.07.2026 թվականի թիվ 02/10624 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1878867 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 7/39 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե, Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 7 շենք, 39 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1381

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) ԹԱՂԱՄԱՍ 10-ՐԴ ՓՈՂՈՑ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՇՈՒՇԱՆԻԿ ՄԿՐՏԻՉԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԻՐԻՆԱ ՀԵՆՐԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Իրինա Հենրիկի Եղիազարյանի (ծնված՝ 24.05.1974թ.), ով նաև հանդիսանում է Սուսաննա Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 02..07.1950թ.) լիազորված անձը, Շուշանիկ Մկրտիչի Սարգսյանի (ծնված՝ 13.06.1960թ.) և Անահիտ Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 28.04.1953թ.) 25.06.2026 թվականի թիվ 02/9570 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 03.06.2026 թվականի ռուսերեն լեզվից հայերեն լեզվով թիվ 3721 թարգմանությունը (նոտարական ակտի կոդը: 763-20260609-67-10170949) լիազորագիրը, 19.06.2026 թվականին տրված թիվ 3783 ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ (նոտարական ակտի կոդը: 763-20260619-84-10210240), 19.06.2026 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3784 (նոտարական ակտի կոդը: 763-20260619-84-10210058), 19.06.2026 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3785 (նոտարական ակտի կոդը: 763-20260619-84-10210147), 19.06.2026 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3786 (նոտարական ակտի կոդը: 763-20260515-84-10093728) և 19.06.2026 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3789 (նոտարական ակտի կոդը: 763-20260515-84-10093483) վկայագրերը, 20.04.1988 թվականին տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 03.07.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ-158/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 10-րդ փողոց 4 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1460.0քմ և նրան կից 235.7քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1950-1970թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1695.7քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Իրինա Հենրիկի Եղիազարյանի (ծնված՝ 24.05.1974թ.) (1/8), Սուսաննա Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 02..07.1950թ.) (1/8), Շուշանիկ Մկրտիչի Սարգսյանի (ծնված՝ 13.06.1960թ.) (1/8) և Անահիտ Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 28.04.1953թ.) (5/8) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 10-րդ փողոց 4 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1460.0քմ և նրան կից 235.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Իրինա Հենրիկի Եղիազարյանի (ծնված՝ 24.05.1974թ.) (1/8), Սուսաննա Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 02..07.1950թ.) (1/8), Շուշանիկ Մկրտիչի Սարգսյանի (ծնված՝ 13.06.1960թ.) (1/8) և Անահիտ Մկրտչի Սարգսյանի (ծնված՝ 28.04.1953թ.) (5/8) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Այլուսագործների փողոց թիվ 22 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 380.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 10-րդ փողոց, 6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2026 թվականի Ν 1382

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՔԻ ԱՄԻՐԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդմիլա Յուրիկի Ամիրբեկյանի դիմումն իր անգործունակ տղայի՝ Սամվել Ավետիքի Ամիրբեկյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2026 թվականի հուլիսի 23-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 10, կետ 13), նաև հիմք ընդունելով Սամվել Ավետիքի Ամիրբեկյանին անգործունակ ճանաչելու մասին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի մայիսի 22-ի թիվ ԼԴ/0102/02/26 վճիռը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի, թիվ 12 շենքի թիվ 54 բնակարանի բնակիչ Լյուդմիլա Յուրիկի Ամիրբեկյանին (ծնված՝ 07.05.1969թ., անձնագիր՝ AV 0242499 տրված՝ 06.06.2022թ., 066-ի կողմից) նշանակել իր անգործունակ տղայի՝ Սամվել Ավետիքի Ամիրբեկյանի (ծնված՝ 24.01.2007թ., անձնագիր՝ AO 0447254, տրված՝ 13.01.2026թ., 066-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1383

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 863 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 29 ապրիլի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 863 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայքի ղեկավարի 29 ապրիլի 2026 թվականի «Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր:06-031-0020-0008) հողամասը Գեղամ Ալբերտի Բաղրամյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 863 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագրում՝«Բաղրամյանի» բառերից հետո լրացնել «և Նաիրա Երվանդի Բաղրամյանի ընդհանուր համատեղ» բառերով:

2. Որոշման նախաբանում՝«02.04.2026» թվերը փոխարինել «09.07.2026» թվերով և«146» թվերը փոխարինել «173» թվերով:

3. Որոշման 2-րդ կետում՝«Բաղրամյանի» բառերից հետո լրացնել «և Նաիրա Երվանդի Բաղրամյանի ընդհանուր համատեղ» բառերով:

4. Որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«4.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 02.04.2026թ. թիվ 146 քաղվածքը» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1384

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0073-0008) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիդա Արշակի Խառատյանի (ծնված՝ 13.07.1949թ.) և Արայիկ Արշակի Աղաջանյանի (ծնված՝ 27.05.1977թ.) 17.07.2026թ. թիվ 02/10879 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1743361 վկայականը, 16.07.2026թ. տրված սեփականության իրավունքի թիվ 4071 (նոտարական ակտի կոդ: 741-20260704-84-10264983) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4073 (նոտարական ակտի կոդ: 741-20260704-84-10264981) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0073-0008) գտնվող, Լիդա Արշակի Խառատյանին (ծնված՝ 13.07.1949թ.) 1/2 և Արայիկ Արշակի Աղաջանյանին (ծնված՝ 27.05.1977թ.) 1/2 պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, 3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1385

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԻՍԱՔԱՆԴ ՋԵՐՄՈՑ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտա Հայկի Ափոյանի և Աշոտ Հայկի Ափոյանի օրինական ներկայացուցիչ Ելենա Հայկի Սարոյանի 17.07.2026 թվականի թիվ 02/10916 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04072023-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր ք. կիսաքանդ ջերմոց հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մայմեխի խճուղի, 28 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                                   Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1386

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԼԵՏ ԳԱԳԻԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Գագիկի Խառատյանի 13.06.2026 թվականի թիվ 02/8920 դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23012025-06-0013 վկայականը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և շինությունների բնութագիրը, 20.07.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026ETVJ97, 20268EDDQ8), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լեռնային փողոց 33 հասցեում գտնվող Համլետ Գագիկի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լեռնային փողոց 33 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.08087հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 286.37քմ ընդհանուր մակերեսով շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Լեռնային փողոց, 33 բնակելի տուն:

բ. 0.0600հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 10.90քմ մակերեսով պարսպին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Լեռնային փողոց, 33/1 պարիսպ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1387

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնքուշ Ժորժիկի Աբազյանի 30.06.2026 թվականի թիվ 02/9875 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600508 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ներսիսյան նրբանցք թիվ 10 շենքի թիվ 32 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 10 շենք, 32 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1388

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ՓԱԿՈՒՂԻ 1, 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլմիկ Մաթևոսի Գևորգյանի, Մարգարիտա Հարությունի Բարխուդարյանի, Կարեն Արթուրի Մնացականյանի և Դավիթ Արթուրի Մնացականյանի 20.07.2026 թվականի թիվ 02/11057 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 09.04.2026 թվականի անշարժ գույքի նվիրատվության թիվ 1589 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20260409-4-9982621), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16012026-06-0031 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 14.04.2026 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14042026-06-0080 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց փակուղի 1, 18 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 1-ին փակուղի, 1 շենք, 18 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 1389

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2816 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 27.12.2024 թվականի թիվ 2816 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 27 դեկտեմբերի 2024 թվականի «Վանաձորի համայնքապետարանի տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը կանոնակարգելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 06-ի թիվ 452 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2816 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «Մերսեդես Բենց E 200 755 LL 70-245լ /բենզին/» բառերը փոխարինել «ՎԱԶ 21214 643 CS 61 - 295լ /բենզին/» բառերով:

2. Որոշման 3-րդ կետում «ՎԱԶ 21214 643 CS 61» բառերը փոխարինել «Մերսեդես Բենց E 200 755 LL 70» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2026 թվականի N1390

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ ԼԵՎՈՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ ԼԵՎՈՆԻ» 2026 թվականի հուլիսի 28-ի թիվ 01/11526 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Բաղրամյան պող. թիվ 58/8-1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ ԼԵՎՈՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Բաղրամյան պող. թիվ 58/24 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ LORI REGION VANADZOR MUNICIPALITY 06967534

2026թ. հուլիսի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 1391

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱԼՈՒՍՏ ԲՈՐԻՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ»-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԱԼՈՒՍՏ ԲՈՐԻՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ»-ի 2026 թվականի հուլիսի 29-ի թիվ 01/11581 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Գր.Լուսավորչի փող. թիվ 50-6/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳԱԼՈՒՍՏ ԲՈՐԻՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ»-ի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 50-6/2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 30
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 հուլիսի 2026 թվականի N 1392

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1254 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Ռոբերտի Ղուբաթյանի 13.07.2026 թվականի թիվ 02/10594 դիմումը, 13.07.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-13072026-06-0128 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 02.07.2026 թվականի թիվ 1254 որոշումը, անշարժ գույքի հասցեններ տրամադրելու մասին քաղվածքը, «ԻՆԷՔՍ» ՍՊ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հուլիսի 2026 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող, Գայանե Ռոբերտի Ղուբաթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինությունները և ինքնակամ իրականացված ձևափոխումնրն օրինականացնելու մասին» թիվ 1254 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն և լրացումը.

1. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

« Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 23 շենքի ծավալում, շենքի սպասարկման գոտում թիվ 23 տարածքին կից ինքնակամ կառուցված տարածքը,տարածքում կատարված ինքնակամ ձևափոխումներն օրինականացնելու եվ բազմաբնակարան շենքի պահպանման եվ սպասարկման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը հաստատելու, փոստային հասցե տրամադրելու մասին»

2.Որոշման 1-ի կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«Ճանաչել օրինական Գայանե Ռոբերտի Ղուբաթյանի սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց 23 շենքի ծավալում (շենքի սպաս), թիվ 23 խանութին կից ինքնակամ կառուցած՝ 5.3քմ արտաքին

մակերեսով /ներքին մակերես 3.8քմ մակերես/ խանութ և տարածքում կատարված թվով 4 ինքնակամ ձևափոխումները:

3. Որոշման հիմքը «ենթակետով» բառից հետո լրացնել հետևյալ «ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով,ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով» բառերով:

3. Որոշումը լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 3-րդ կետով.

«Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 23 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.10236 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մյասնիկյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ա. Մյասնիկյան փողոց, 23 շենք, 1/1 խանութ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 30
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 հուլիսի 2026 թվականի N 1393

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 4/1-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անի Գուրգենի Նազարյանի 30.07.2026 թվականի թիվ 02/11612 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26092018-06-0049 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 4/1-2 հասցեում գտնվող Անի Գուրգենի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.01944հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերից հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 30
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2026 թվականի N1394

### «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ԼԵՆՎԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2.Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 01.07.2026 թվականի կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործող օբյեկտում ( ՀՎՀՀ՝ 06919243, հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր Խուդյակովի փող. տուն թիվ 48, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պ./շենք թիվ 34Բ /3) բացակայում է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի 2026 թվականի երկրորդ եռամսյակի համար համապատասխան թույլտվությունը:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2026 թվականի հուլիսի 10-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Լենվելի Մանուկյանը ծանուցվել, սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (փոստային առաքման ծանուցման կտրոններ թիվ LO134250061AM, LO134249939AM, որոնց հետադարձ կտրոնները մեր կողմից չեն ստացվել): Այնուհետև կրկին վարչական վարույթի լսումներ նշանակվել են 2026 թվականի հուլիսի 20-ին, սակայն «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Լենվելի Մանուկյանը չի ներկայացել (փոստային առաքման

ծանուցման կտրոն թիվ LO134410465AM, որի հետադարձ կտրոնը մեր կողմից չի ստացվել) և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված): Այսպիսով «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Լենվելի Մանուկյանը վարչական վարույթի լսումներին պատշաճ ծանուցվել է և կրկին չի ներկայացել ( ՀՀ ինտերնետային ծանուցման պաշտոնական կայք «azdarar»):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $219^1$-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ

գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 169.16-րդ հոդվածի 1-ին մասով, $219^{1}$-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1. «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Լենվելի Մանուկյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Լենվելի Մանուկյանին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հուլիսի 30
ք.Վանաձոր